# Արձանագրություն 2

**Վանաձոր համայնքի Մայաք-Նովայի անվան զբոսայգու հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերման « ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/76» ծածկագրով գնանշման հարցումով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի**

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ «12» օգոստոսի 2021թ. ժամը 10:00-ին:

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

Արմեն Ալավերդյան

***Անդամներ***

Միհրան Պառավյան,

Վազգեն Մխիթարյան, Նոնա Եղիազարյան

***Գնումները համակարգող***

Վեներա Վասիլյան

## 1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

1.1 Ընդունել ի գիտություն,որ

Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

1.2 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրացուցային օրը, ժամը 10:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

## 2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները)

2.1 Վանաձորի համայնքապետարանի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «*ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/76*» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել.

| Մասնակիցներ |
|---|
| «ԻՐՏԻԳ» ՍՊԸ |
| «ՏԵԽ ԴՐԱՖՏ» ՍՊԸ |
| «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ |
| «ԱԳԷԱ» ՍՊԸ |

1.2 Համակարգում 12.08.2021թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ–0

## 3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին

3.1 «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում բացակայում է նախկինում կատարված նմանատիպ պայմանագիրը,ինչպես նաև հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին:«ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնական աշխատակազմը չի համապատասխանում հրավերում նշված աշխատանքային ռեսուրսների պահանջին: «ԱԳԷԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հիմնական աշխատակազմը չի համապատասխանում հրավերում նշված աշխատանքային ռեսուրսների պահանջին:«ՏԵԽ ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված աշխատակցի՝ Մաղաքյան Հայկի անձնագրի

վավերականության ժամկետը ավարտված է /ուղարկել նոր անձնագրի սկանավորված տարբերակը,եթե առկա է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

## 4.Հանձնաժողովը որոշման վերաբերյալ

4.1 Համաձայն «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/76» ծածկագրով հրավերի 8.9-ի կետի հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց նիստը՝ մասնակիցներին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 16.08.2021թ. ժամը 11:30-ն, շտկել անհամապատասխանությունները և ուղղարկել gnumnervanadzor@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

## 5.Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

5.1 «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/76» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի կունենա 16.08.2021թ. ժամը 11:30, հասցեն ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, 311 սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

## Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 16.08.2021թ.11:30-ին

## 6. Անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ

6.1 Մասնակիցներին տրվել էր ոչ գնային պայմանների անհամապատասխանությունների շտկման հնարավորություն,մասնավորապես «ՏԵԽ ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ի և «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից շտկվել են ոչ գնային անհամապատասխանությունները,իսկ «ԱԳԷԱ» ՍՊԸ-ի կողմից ոչ գնային պայմանների անհամապատասխանությունները չեն շտկվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

## 7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

7.1 «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/76» ծածկագրով ընթացակարգի մասնակիցների կողմից առաջարկած գները .

1-ին չափաբաժին

| ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ(ՆԵՐ)Ի ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | |
|---|---|---|---|
| | Ինքնարժեք | ԱԱՀ | Առաջարկված գին |
| **Վանաձոր համայնքի Սայաթ-Նովայի անվան զբոսայգու հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայության ձեռքբերում** | | | |
| «ՏԵԽ ԴՐԱՖՏ» ՍՊԸ | 1800000 | - | 1800000 |
| «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ | 4200000 | - | 4200000 |
| «ԱԳԷԱ» ՍՊԸ | 10990000 | - | 10990000 |
| «ԻՐՏԻԳ» ՍՊԸ | 11100000 | 2220000 | 13320000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

## 8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վերաբերյալ

8.1 «*ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/76*» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողով հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և «*ՀՀ ԼՄՎՔ ԳՀԾՁԲ-21/76*» ծածկագրով հրավերի 1-ին մասի 8.7 կետի պահանջները ընթացակարգի բոլոր մասնակիցներին՝ «ՏԵԽ ԴՐԱՖՏ» ՍՊԸ-ին, «ՍԱՐԴԱՐՅԱՆՇԻՆ» ՍՊԸ-ին, «ԱԳԵԱ» ՍՊԸ-ին, «ԻՐՏԻԳ» ՍՊԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների: Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ տեղի կունենա 19.08.2021թ. ժամը 11:00 , հասցեն ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 22, 311սենյակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ – 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ____________ Ա. Ալավերդյան

հանձնաժողովի անդամներ՝

____________ Մ. Պառավյան

____________ Վ. Մխիթարյան

____________ Ն. Եղիազարյան

Գնումները համակարգող ՝ ____________Վ. Վասիլյան